ԳՈՀԱՐ ԴԵՐԵՆԻԿԻ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 13.02.1950
Ծննդավայր՝ ՀՀ, Երևան

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Գոհար Դերենիկի Վարդումյանը** 1967 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի Ռոմանա-գերմանական բանասիրության բաժինը (անգլերեն լեզու), որն ավարտել է 1972 թվականին:

1973-1976 թվականներին եղել է Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի Ազգագրության ամբիոնի ասպիրանտ:

1983 թվականին Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայոց նախաքրիստոնեական պաշտամունքը» թեմայով:

2006 թվականին ստացել է ստացել է դոցենտի գիտական կոչում «Կրոնների պատմություն. Պրակ Ա, Հին կրոններ» բուհական ձեռնարկի համար (համահեղինակ՝ Ե. Մարգարյան):

1973-1976 թվականներին մասնակցել է ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտարշավներին, որոնց ընթացքում դաշտային նյութեր է հավաքել Գեղարքունիքում, Շիրակում, Լոռիում, Ջավախքում:

1976 թվականին Գ. Վարդումյանը աշխատանքի է ընդունվել Պատմության ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև նշանակվել է ավագ և առաջատար գիտաշխատողի պաշտոններում:

2019-2024 թվականներին եղել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հին դարերի բաժնի վարիչը:

2019 թվականից մինչ օրս Պատմության ինստիտուտի «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի անդամ է:

2020-2025 թվականներին եղել է Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ:

1991 թվականից մինչ օրս Գ. Վարդումյանը գիտական աշխատանքը համատեղում է մանկավարժական գործունեության հետ:

1991-2001 թվականներին աշխատել է որպես ավագ դասախոս Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում՝ դասավանդելով «Հայոց պատմություն» առարկան:

1992-2000 թվականներին աշխատել է որպես ավագ դասախոս Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում՝ դասավանդելով «Ազգագրություն» առարկան:

2003-2018 թվականներին աշխատել է որպես դոցենտ Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի մագիստրատուրայում՝ դասավանդելով «Եվրոպայի ժողովուրդների ազգագրություն» առարկան:

2015-2017 թվականներին աշխատել է որպես դոցենտ ՀՀ ԳԱԱ մագիստրատուրայում՝ դասավանդելով «Հայ մշակույթը համաշխարհային մշակույթի համատեքստում» առարկան:

2000 թվականից մինչ օրս աշխատում է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում, բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդելով հայոց պատմությանն ու մշակույթին, նաև՝ համաշխարհային քաղաքակրթությանն առնչվող բազմաթիվ առարկաներ:

2000 թվականից անդամակցում է «Ժայռապատկերների Ուսումնասիրության Հայկական Միություն – Տիր» (ARARA-T) ՀԿ-ին, որպես ազգագրագետ, դիցաբան:

2000 թվականից Լոնդոնի «Էթնիկության և Ազգայնության ուսումնասիրման ասոցիացիայի» անդամ է:

2007 թվականից՝ «Բյուզանդագետների միջազգային ասոցիացիայի» անդամ է:

2016 թվականից «Հայաստանի պատմագետների միության» անդամ է:

Գ. Վարդումյանի գիտական հետաքրքրությունները ներառում են հին շրջանի հայոց պատմության և մշակույթի հարցերը, հայոց պետականության զարգացման փուլերը, համաշխարհային քաղաքակրթության մեջ հայաշխարհի դերը:

Հեղինակ է հայոց հին հավատքին նվիրված մենագրության, հին կրոններին նվիրված ուսումնական ձեռնարկի, շուրջ 130 գիտական հոդվածների՝ տպագրված հանրապետական և արտասահմանյան հեղինակավոր, այդ թվում՝ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում (ՄԳՇ) ընգրկված պարբերականներում:

Գ. Վարդումյանը եղել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում հրատարակվող «Հայոց պատմություն» ակադեմիական քառահատորյակի Հատոր I, Գիրք երկրորդի (Հին դարեր, Ք.ա. IX դար – Ք.հ. III դար, 2024) խմբագրակազմում, նաև հեղինակ և համահեղինակ է նույն հատորի և Հատոր II, Գիրք առաջինի (Միջին դարեր, IV դարի սկիզբ – IX դարի կես, 2018) մի շարք բաժինների:

Գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, գործնական սեմինարներում, մասնակցել է պատմագիտությանը, ազգագրությանը, մշակույթին նվիրված բազմաթիվ ռադիո-հեռուստատեսային և առցանց հաղորդումների:

Հրավիրվել է մասնակցելու գիտաժողովների Վրաստանում, Հունաստանում, Ռուսաստանում, Չինաստանում և այլուր, որոնց զեկուցումները տպագրվել են որպես հոդվածներ ռուսերեն, անգլերեն, հունարեն, իսպաներեն, չինարեն լեզուներով: Արտերկրի մի քանի կարևոր հրատարակություններում հեղինակել է հին հայոց կրոնին և դիցաբանությանը նվիրված բաժինները:

Ղեկավարել և գրախոսել է բազմաթիվ ավարտական աշխատանքներ և մագիստրոսական թեզեր, ընդդիմախոսել թեկնածուական ատենախոսություններ, խմբագրել գիտական և գիտահանրամատչելի ուսումնասիրություններ, ղեկավարում է թեկնածուական ատենախոսություններ:

Արժանացել է՝

* Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Շնորհակալագրին՝ Ուսանողական գիտական ընկերության կազմակերպած «Մետաքսի ճանապարհը և Հայաստանը» գիտաժողովին մասնակցելու համար (2011 թ.),

* ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Գովեստագրին՝ ինստիտուտի հիմնադրման 70-ամյակի առթիվ և արդյունավետ գիտական գործունեության համար (2013 թ.),

* Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Շնորհակալագրին՝ համալսարանում երկարամյա, անբասիր աշխատանքի և ծննդյան 70-ամյակի կապակցությամբ (2020 թ.), գործուն աջակցության համար (2025 թ.),

* Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Շնորհակալագրին՝ «Հետազոտող ուսանող» գիտաժողովի աշխատանքներին ցուցաբերած ակտիվության և գործուն աջակցության համար (2025 թ.),

* Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Շնորհակալագրին՝ համալսարանի հիմնադրման 90-ամյակին նվիրված «Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում» միջազգային գիտաժողովի աշխատանքներին ունեցած մասնակցության և գործուն աջակցության համար (2025 թ.),

* ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Պատվոգրին՝ ինստիտուտում երկարամյա անձնվեր, բարեխիղճ և արդյունավետ աշխատանքի համար (2025 թ.),

* ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Վաստակագրին՝ Աշխատանքի օրվա և ինստիտուտում երկարամյա գիտական գործունեության համար (2026 թ.):